Այստեղ նկատուում է մի հայ եկեղեցու անհրաժեշտութիւն։ Ա՞զքեր պէտք է մտածեն այդ մասին։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ.

„Кавказъ" լրագիրը հաղորդում է, որ ներկայ օգոստոսի 19-ին Բարձրագոյն բարեհաճութեամբ Ս. Էջմիածնի Սինոդի անդամութիւնից արձակուում են դեր. Տ. Մակար եպս. Բարխուտարեանց և Տ. Մխիթար վրդ. Տէր-Մկրտչեան համաձայն իրանց խնդրի հիւանդութեան պատճառով. և նշանակուում են նոր անդամներ դեր. Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, Տ. Յուսիկ վրդ. Զոհրաբեան, Տ. Մատթէոս վրդ. Մատթէոսեան և Տ. Բարդէն վրդ. Աղասելեան։

ՏԵՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ Գ. ԲՈՒՐԳՈՒՄ։

Մեզ խնդրում են հաղորդել, որ այս օգոստոս ամսից ներքին Գործոց Նախարարութեան թոյլտուութեամբ բացուել են Գ. Բուրգում Ս. Աբրակումովի «Տեսական երաժշտական դասընթացներ»։ Բացի տեղական նշանակութիւնից նպատակ ունին հնարաւորութիւն տալ դաւառացիներին, օր. դպրոցական ուսուցիչներին, խմբապետներին, երաժշտական խմբերի ղեկավարներին, երաժշտութեան ուսուցիչներին, նոյնպէս և աշխարհիկ և կրօնական երաժշտութեան սիրողներին և ձայնագրագէտներին, առանց իրանց գործին մնալու, դասընթացների հետ գրաւոր ութեամբ անցնել կամ լրացնել իրանց երաժշտական տեսական զարգացումը. ուղարկելով իրանց աշխատութիւնները դասընթացներին ստուգելու և սխալները ուղղելու։ Դասախօսութիւնները ուսանողներին ուղարկուում է ձրի։ Ուղղուած աշխատութիւնները ուղարկուում են վերադիր վճարով։ Ուսուցման վճարը նշանակուած է բաւական աժան, օր. ժողովրդական ուսումնարանների ուսուցիչները ամսական վճարում են 2 բուբլի։

ՎԱՆՔԻ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՑՓՈԽԱՆ

Անցեալ յուլիս ամսին Վանքի ծխականների բազմամարդ ժողովը գրեթէ միաձայն երեցփոխան ընտրեց նոյն եկեղեցու